

Շվեյցարիա-Հայաստան խորհրդարանական խումբ

Մամլո հաղորդագրություն

Բեռն, 7 հոկտեմբերի, 2008 թ.

Շվեյցարիայի խորհրդարանականների պատվիրակության մեկնումը Հայաստան

ՀՀ Ազգային ժողովի իրենց գործընկեր խմբի հրավերով այս օրերին Շվեյցարիա-Հայաստան խորհրդարանական 7-հոգանոց խումբն Ազգային խորհրդականներ Ուելի Լյոնբերգերի և Դոմինիկ Բուրանի ղեկավարությամբ հնգօրյա այցով մեկնում է Հայաստանի Հանրապետություն: Այցի նպատակը մեր երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի ամրապնդումն է: Այցի ընթացքում պատգամավորներին կուղեկցեն շվեյցարահայ համայնքի, Շվեյցարիայի տնտեսության մասնավոր սեկտորի, ինչպես նաև ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Պատվիրակությունն առանձնակի հետաքրքրություն է դրսևորելու Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակին, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանի նոր աշխարհաքաղաքական պայմաններին:

Ուղևորության պաշտոնական մասի ընթացքում, որին կընկերակցի Հայաստանում Շվեյցարիայի դեսպանը (նստավայրը՝ Թբիլիսի), նախատեսված են հանդիպումներ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ինչպես նաև կառավարության մի շարք անդամների հետ, այդ թվում՝ փոխվարչապես պրն. Արմեն Գևորգյանի, Էկոնոմիկայի նախարար պրն. Ներսես Երիցյանի և փոխարտգործնախարար պրն. Արման Կիրակոսյանի հետ:

Պատվիրակությունը կհանդիպի Ազգային ժողովի նորընտիր նախագահ պրն. Հովիկ Աբրահամյանի, ինչպես նաև պրոֆեսոր Արա Բաբոյանի ղեկավարած Հայաստան-Շվեյցարիա խորհրդարանական բարեկամության խմբի հետ: Շվեյցարացի խորհրդարանականները հնարավորություն կունենան ավելի լավ ծանոթանալու երկրի ներքին վիճակին և Հայաստանում ժողովրդավարության զարգացմանն առնչվող գործընթացներին: Պատվիրակությունը ներկա կլինի Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտում կազմակերպված փորձագետների ելույթներին, ինչպես նաև կհանդիպի ընդդիմության, մասնավորապես՝ Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) և Ժառանգություն կուսակցության ներկայացուցիչների հետ:

Պատվիրակությունը Երևանում Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցչության շենքում հանդիպում կունենա նաև ԼՂՀ ներկայացուցիչների հետ: Շվեյցարացի խորհրդարանականները կայցելեն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ պսակ կգետնդնեն ի հիշատակ 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի: Այցի ծրագրով նախատեսված է նաև

Հայաստանի կայուն զարգացման հետ կապված մի շարք նախագծերի հետ ծանոթացում, որոնց մի մասը ստանում է Շվեյցարիայի Զարգացման և համագործակցության դեպարտամենտի աջակցությունը, ինչպես նաև այցելություններ երկրի կարևոր գիտական հաստատություններ: Նախատեսված է նաև հարուստ մշակութային ծրագիր:

Հոկտեմբերի 10-ի ութաթ օրը, տեղական ժամանակով 16.30-ին (Շվեյցարիայի ժամանակով 13.30-ին) հայկական և շվեյցարական խորհրդարանական խմբերը ՀՀ Ազգային ժողովի մամլո սրահում համատեղ մամլո ասուլիս կանցկացնեն: